Թ ՏԱՐԻ | ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1 | ԹԻՒ 843

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 "
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ'ըլլայ:

—o—

Վաճառքի համար ձեռքէ 40 սանթիմ է

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

[illegible] եւ դրամ [illegible] խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ„ Варна

Redaction du journa „Charjoum» Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

„ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ„

Արդէն այս անունով բրոշիւրը յանձնված է տպագրութեան.

Բրոշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միևնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց. Բնական է որ բրոշիւրի մէջ փաստող դօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն.

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժօզէֆ քարափին վրայ. կըստանայ զանազան հայերէն թերթեր. Ու հասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները.

## ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՇԷՖԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻՑ

Էջմիածնի համագումարում, երբ շէֆերը սկսում են կեղծաւոր ճառերը—երիտասարդ դաշնակցական բժ. Լեւոն Աթաբէկեան բարկանալով ոտքի է կանգնում և իր շէֆերին յայտնում—դուք ճիզուիթներ էք, փարիսեցիներ էք.

Մի այլ անգամ, մի ընկերավարականի դասախօսութեան միջոցին մերկացւում է դաշնակցութեան վէրքերը և ինչպէս „Նոր Խօսք„ թերթը հաղորդում է երիտասարդ դաշնակցական (Պօզ) յայտարարում է—Դաշնակցութիւնը մի հրաբխային տնիւ է դարձել, որը ամեն օր քշվում է իւրաքանչիւրիս, որ նա մի կատարեալ բիւրոկրատիա է, նա գտնվում է ՍԱԽՄԱՓԵԼԻ ՏՐԱԳԻԶՄԻ մէջ. (ողբերգական կացութեան մէջ) մի քանի գիկտատոներ այդ հսկայ և խառնիճաղանճ մարմինը իրանց քմահաճոյքներին են ծառայեցնում, որ ժողովուրդը ինքն է մեղաւոր և պարտաւոր է կռիւ յայտարարել մանաւանդ „Ալիքի„ և „Զանգ„ի խմբագրութեան դէմ.

Նոյն „Նոր Խօսք„ թերթի մէջ կարդում ենք հետեւեալը.—Լսում ենք, դաշնակցութեան ընդդիմադիր մասը սթափւել է Մռաւեանի „ժամանակ է սթափվելու„ գրքով և մտադիր է իր առանձին պարբերական օրգանը հրատարակել.

Մեր ընթերցողներին արդէն յայտնի է որ Կովկասի ժողովրդի ահագին մեծամասնութիւնը, մանաւանդ գիտակից մասը դատապարտում է դաշնակցական շէֆերին, այդ գիտակիցների մէջ կան երէկի դաշնակցական կարեւոր գործիչներ և համակիրներ—դրանց վրա աւելանում են և երիտասարդ գիտակից դաշնակցականները—որոնք կազմակերպութեան մէջ մնալով հանդերձ խստիւ դատափետում են դաշնակցական շէֆերին և կազմակերպութիւնը որակում շատ նսեմացնող ածականներով և այնքան առաջ են գնում, որ ուզում են առանձին օրգան հիմնել.

Իսկ թէ ժողովրդի մտաւորապէս ոչ պատրաստված մասը ինչպէս է զսպվում դաշնակցութեան կողմից Կովկասում, ահա մի կտոր „Նոր Խօսք„ից որ շատ բան է պարզում.

„Դաշնակցութեան ղուկն ու ծուծը կազմող այդ վաչխառու մարմինները զինված վանդալական հասկացողութիւնների ինտելիգենտներով չահատակութեան և անձնական եսի չահախնդրութիւններով դաշնակցական քաղաքական „շարժումը„ ու յեղափոխութիւնը դարձրին իրանց փառասիրութեան, շահի և անձնականութեան բացարձակ ասպարէզ թեւութիկունք ունենալով դաշնակցական զինւորական ուժը, որոնց նրանք գրաւում էին փողով—հացով ու պատիւներով. մի առանձին սանձարձակութեամբ դառնում են բռնակալ տեսպօտներ որոնց մեն մի հրամանը, խօսքը, բռնի կարգադրութիւնները կատարւում են առանձին ճշդութեամբ և թափով. Վայ նրան ով որ „կօմիտէ„ի թշնամի է, հակառակորդը նրա աչքի փուշը այլեւս կեանք չունի, այլեւս նա գիւղը չը պիտի մնայ. Տուգանքներ, վճարներ տեղի անտեղի պահանջներ է որ ուժեղ թափով թափւում են գիւղացու գլխին և ով յանդգնութիւն կունենայ չենթարկելու նրանց փաշայական կամքին.

Եզրակացութիւն.—Կովկասում, այսօր դաշնակցութեան դէմ է կանգնած պահպանողական, ազատական և ընկերավարական ժամուլը. դաշնակցութեան դէմ են երէկվան իր ազդեցիկ անդամները և համակիրները. դաշնակցութեան դէմ է և պարզ ժողովուրդը որը մինչեւ օրս զսպվել է միայն Թուրք և ռուս կառավարութեան յատուկ բռնի և լիրբ միջոցներով. Դաշնակցութեան դէմ են և երիտասարդ դաշնակցականները....

Իսկապէս ողբերգական վիճակ, ինչպէս բնորոշել է վերը յիշած երիտասարդ դաշնակցականը. Անկումը բարոյական կատարեալ է և մնում է ֆիզիքական անկումը. և ինչպէս երեւում է այդ օրն էլ հեռու չէ, եթէ ընդդիմադիր դաշնակցականների վերջնական ճիգերը չը թափեն կազմակերպութիւնը փրկելու գահաճ դիկտատորների ձեռքից, և նրան դնելու իր վայել կացութեան մէջ. Այո, այս բոլորը ապացուցում են, որ դաշնակցութեան առջեւ դրված է լինել չը լինելու ողբերգական հարցը. և դրա նպաստաւոր լուծումը կախված է ընդդիմադիր դաշնակցականների կորովից և ընդունակութիւնից. Ներկայ դրութիւնը դաշնակցութեան բացարձակ կործանում և պառակտում է սպառնում. փրկութեան միջոցը զանազան դիկտատոր տիրացուներից և նրանց լաքէներից գործի ղեկը խլելն է....

ՎԱՐԴՕ

# ԲԱՑ ՆԱՄԱԿ

## Պ. ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻՆ

Սիրելի եղբայր,

Թէև հեռուից լսեցինք լուրը քու ազատութեան, բայց մօտից. շատ մօտից ուրախացանք. Մեր սրտի խորքերից զգացինք անխառն ու անկեղծ ուրախութիւն՝ քու տաժանանքով լի կեանքին նորից իւր վաղեմի իրականութեան դառնալուն. Մանաւանդ երբ լսում ենք քու անսուտ բերանից՝ թէ նորից պէտք է վերադառնաս հին իտէալիդ իրագործումին.

Պ. Կուկունեան մեր սիրելի ընկեր Մուրատն քեզ նման ողջունեց ազատութեան կրկնեբեւոյթը. Այո՛. քարերից յաբուցեց Ձեզ հայի Աստուածը, դուք մեռած էիք թշնամուն համար, և ապրում էիք ամեն հայրենասէր հայ սրտերում. և ունէիք սա տապանադիրը. „Վասն հայրենեաց մեռաք, դուք շատ ապրեցաք.„ Այո՛, մեռաք դուք թշնամուն համար, բայց ապրեցաք ձեր ազգի համար և պէտք է ապրիք տակաւին դուք Երկուորեակ բազդակիցներ, Կուկունեան և Մուրատ, դուք փորձանքի բովից դուրս եկած, զտւած, մաքուր և փորձառու, դուք այսօր հայի Յոբեանն էք, կէսի փորից՝ կենդանի գերեզմանից

